

Նաև, սիրաքայ մեկնիչն որ ի Յակոբայ պատրիարքէն է, զայն ևս եթէ մինչի երկու հարիւր դուռուշը գրեսցեն, գրել տացե՛ս և տպեսցուք, զի և այն՝ շատ օգուտ գործէ ազգին մերս:

Եւս հետեւեաց, թերեւս ձո՞ն Բարսղի մեկնութեան կէսն կարողանաս գոտանել, զի ընդ Մատթէոսի աւետարանի մեկնութեան որ ի Շնորհալոյն և զՄարկոսինն ևս տպեսցուք:

Զունէի ես ժամանակ այսքան երկարել զգրիչս, այլ մինչ հարկըն սոխպեաց, նեղեալ զիս գրեցի, զի գու մխիթարեալ՝ յառաջին սէրն քոյ արիացիս: Եւ ես՝ մնամ վասն սիրելի որդւոյդ իմ միշտ ....

### 1790 Յունվար 4

ի մեծ բանակին: Այս առաքեմ ի Բրիոտան....

Սահման. Այս նամակն որ գտանուեցաւ Ա. Աթոռոյս դիւանում, գործ է Դեր. Յովսէփ Արքեպիսկոպոսի Արշութեանց, Ռուսաստանի Հայոց առաջնորդի, Եկատերինէ Բ. կայսերուհու ժամանակ և Հիմնադրին նոր նախիչեան քաղաքի Դօն գետի մօտ: Գրած է հայր Ստեփան աւագ քահանային, որին ուղարկել էր նոր Զուղայ և Հնդկաստան հանդանակութեան, նոր հիմնած հայ գաղթականութեան՝ նոր նախիչեանի համար: Նամակի բովանդակութիւնն այնքան պարզ է, որ անկարօտ է բացատրութեան: Անտարակցու է, որ Հնդկահայոց արած բազմաթիւ կտակների մի մասը հետեւանք է վերոյիշեալ աւագ քահանայի ազդեցութեան:

## Մ Ի Լ Տ Ո Ն

ԵՒ ՆՈՐԱ

ԿՈԴՐՈՒՍ ՊՐԱԽՈՏԻ.

( Հայ Տէնէ )

( Ճ-Ք-Ա-Ն-Ի-Ռ-Ի-Ն )

Նա ինձ հաւատացնում էր, ասում է Դրայդէնը, թէ իրա օրինակը միշտ եղել է Սպէնսէրը: Եւ իրաւ, բարոյական մաքրութեամբ, բարձրաստիճան վսեմութեամբ, հարուստ և կարգաբան ոճով, ասպետական ազնիւ զգացնումներով և ընակր գասական բարեհներութեամբ՝ այդ երկուսը պէտք է եղբայր կոչուին: Բայց նա ունէր ուրիշ վարժապետներ ևս—Բոմնն, Ֆլէտ-

չէր, Բուրառն, Դրումմոնդ, Բէն - Զոնսոն, Շեքսպիր, Համայն անգլիական պայծառ վերածնութիւն, այլ և իտալական բանաստեղծութիւն, լատինական ծերութիւն, յունական գեղարուեստ գրականութիւն, մի խօսքով այն բոլոր աշբերակները, որոնցից որ գետացաւ անգլիական վերածնութիւնը, նա այդ մեծ հոսանքը շարունակեց, բայց սեպհական յատուկ տարազով: Նոցանից փոխ առաւ այլարանութիւնները, դիցարանութիւնը, շատ անգամ նաև պաճուճանքները, իսկ միւս հանգամանքներով արդէն նոցա հարազատ զուտակն էր, այն է նոցա երփնաւոր պայծառութիւնը, կենազարդ ընութեան հյակապ պատկերացումները, ձեմ և գյների անհուն սէրը - նոյն իսկ նորա մտքի և երևակայութեան խորքից էին բղխում: Միայն թէ նոցա ասացուածի պայմանը նա ձեւացրեց յատուկ եղանակով, իսկ բանատեղծութեան պաշտօնը ըմբռնեց նոր և անսովոր կիրապով: Նա գրում էր ոչ թէ, յանկարծական դիպուածով, այլ ընկերական կենցաղի յատուկ տպաւորութեան ներքոյ՝ այն ևս որպէս ուսումնական, որպէս հումանիստ, գըրքերի օգնականութեամբ, և իրերի մասին դատում էր թէ սեփական տպաւորութեան ազդումներով և թէ նախորդների հետախուզութեանց վերայ հիմնուած, իւր գաղափարների հետ միաւորում էր ուրիշի գաղափարները, նոցա նորամուծութիւնները ըստ դիպաց և ըստ վայելչութեան փոխարինում և փոփոխում էր, ինչպէս այն վարպետը՝ որ քսան ոսկերիչների ձուլած մանր քանդակներն ու ոսկէ զարդերը ըստ պատշաճի նորաձեռում է՝ այստեղ մի բան քերելով, այնտեղ մի բան կցելով, որպէս զի նոցանից մի շքեղ վարսակալ կազմէ: Այս ուղղութեամբ նա յօրինեց սեպհական մի ոճ, մի բարդ և պայծառ ոճ, որ թէև իւր նախորդների ոճից նուազ շափով ընական է, սրտի զեղումների համար լաւ յարմարեցուցած չէ, զգացման անմիջական աշխուժութիւնը թոյլ է արտայատում, սակայն այնքան հաստատուն և կանոնաւոր է, որ կարող է արձակ և լայն լուսով ի մի ամփոփել նոցա ցրիւ ցրիւ առկայծութիւններն ու մերժմերթ բոնկումները, նա նսքիլէսի պէս կազմում էր՝ վեցկանգնեան՝ բառեր, որ «պճնազարդում էր փետուրներով ու ծիրանիով» և նոցանից կազմում էր կարծես թէ արքայաշուր առաջակարգ թափօր, որպէս զի սորա ետևից եկող իւր քարոզութեանց գաղափարները՝ գլխաւոր նշանակութիւն ստանան և չորս բոլորը փառքով հանդիսանան ու նշանակութիւն կացուցանուին: Նա նկարազրում է՝ «սիրուն յաւերժահարներ՝ այն արծաթէ սանդալներով և ծաղկահիւս պատմումներով անմահութեան սպիտակավարդերը, երեկոյ՝ որ սեաթոյր կնգուղով փաթաթուած և ուխտաւոր ճգնաւորի պէս սքեմով ծածկուած՝ փութանակի զարթնում է արեգակի ճեպընթաց անիւնների յետեից: կղզիներ՝ որոնք իրանց մէջքին ալիքների գտի են կապել և որպէս ինքնաճաճանչ անգին գոհտրներ ու մարդարիտներ՝ ցրիւ են տուած անդունիների մերկարաց կործքի վերայ: կարդ կարդ շարուած բոցելէն սրովմէները, որ մարդու աշքը խտղելով իրանց հրեշտակային բարձրահնչակ փողերը դարձել են վեր դէպի երկինք»: Նա միւս բանաստեղծների ցիր ու ցան ծա-

զիկներից հաւաքում է մի մեծ թուփ. «Վաղահաս կովացնծուկ՝ որ մինու-  
ճար որբի պէս մեռնումէ »\*) խոպոպիկ օմբուլ (յակինմ), գունատ յաս-  
միկ, պենտեկոստէի ծաղիկ՝ երփնաւորած գագաթի բծերով, բարբորած մա-  
նիշակ, անուշաբայր վարդ, շնորհանազիկ այժտերեկուկ, կաթոգին կկուի  
հաց՝ որ խորախորհուրդ մտածմունքներով իւր փոքրիկ զլուկը խոնարհել է,  
և բոլոր ծաղիկներ՝ որոնք մելամաղձ նկարներով գյնզգյոն փայլում են :  
Նա հրափրում էր նոցա, որ իւր բարեկամի շուրջը բոլորուին, և ինչդրում  
էր ։ Թաւրնջակին՝ որ այնտեղ աղէխորով թափէ իւր բոլոր գեղեցկութիւնը,  
Նարդիկներին՝ որ իրանց բաժակները լցնեն արտասուքներով : — Տակաւին  
պատանեկութեան ժամանակ, Կէմբրիջում ուսումը աւարտելուց առաջ, նա  
հետամուտ էր ճոխ և հյակապ ոճի վարժութիւնը ստանալու, պահանջ էր  
զգում երկայն խրոխտածայն տողեր՝ քաջահունչ ողորկ տներ և ահագին  
պարբերութիւններ գործածելու, ուր վերջիններից իւրաքանչիւրը բաղկա-  
ցած էր լինում տասնուշորսական և քսանուշորսական տողերից : Նա ա-  
ռարկաները զէմ յանդիման չէր զնում հասարակ մահկանացուի պէս, այլ  
Գեօթէի հրեշտակապետների պէս \* — բարձրութիւնից, որոնք մի ակնարկով  
շրջահայում են թէ եղները ողողող ովկիանների ամբողջութիւնը, և թէ  
երկիրը՝ որ ափեզերական միւս համատեսակ լուսաւոր մարմինների շրջանում  
իւր որոշ տեղը ստացած՝ բարեկարգութեամբ շրջում է : Նա զգում էր ոչ  
թէ իւսուց՝ վերածնութեան մեծ քերթողների և արուեստագէտների պէս,  
այլ գլուխ-նիւնը՝ Եպքիլէսի և Հրէից մարդարէների պէս, որոնց կորովի մրտ-  
քը, քնարերդական ստեղծողութիւնը, կրօնական վառ զգացողութիւնը և  
անսպառ անշէջ հիացումը ինքն էլ ունէր և նոցա պէս երգում էր աստուա-  
ծային սրբազն վեհափառութիւնն ու հյակապ ճոխութիւնը : Այս կար-  
գի զգացում արտայայտելու համար բաւական չէ միայն այնպիսի պատկե-  
րացումն ու բանաստեղծութիւնը՝ որ լոկ տեսողականի վերայ է ազգում,  
այլ անշուշտ հարկաւոր են նաև այն սերովբէսական հնչիւններն ու սրտա-  
բուղի ստեղծաբանութիւնը՝ որ բացի Փիզիբական ներգործութիւնից՝ առա-  
ւելակէս հոգու վերայ է ազգում : Միլտոնը բանաստեղծելիս կատարեալ  
երգահան էր : Նորա օրհներգութիւնները բղխում են որպէս ալիքներ ալիք-  
ների յետևից, արձագանք տալով ընդարձակում ձգւում են նախնեաց  
ճաշակի համեմատ : Լուրջ հոսում են ատենական պերճախօսութեան պէս.  
կարծես թէ իւր աննման տաղերի մէջ նկարագրուում է նոյն իսկ արուեստը,  
որ հնչում, զօրանում, զարդանում և բարդաւաճում է որպէս հոգեռը  
նուագերգութեան աւելի և աւելի աճող հանդիսաւորութիւնը :

Գիշերային խոր լոռութեան ժամանակ, երբ որ մրափի թմրութիւնը —

\*) Այնքան վաղ է ծաղկում (փետրուարին). որ միւս ծաղիկները գո-  
րան չեն հասնում :

\*) Faust, Prolog im Himmel.

մահկանացուի զգայարանքները շղթայում է, ես՝ լսում եմ նուագաւոր դաշնակութիւն երկնային յուշկապարիկների—որոնք իննը գօտիացեալ սփիւռների վերայ բազմած—երգում են այն էակների համար՝ որ պահպանում են կեաների մկրատը—և ոլորում են ադամանդեայ իլիկները—մանելով աստուածների և մարդկանց բահարլ։—Այս այս է սրբազն գաշնակութեան քաջրաբորով ներգործութիւնը, —որոյ պաշտօնն է կախարդել Անզերծանելի հրամանաց գուստըներին, —անխախուտ պահպանել բնութեան լուծուող օրենքը—և կարգաւորելով առաջնորդել հողեղէն աշխարհքի վայելչակազմ պարն ու ցոյցը՝ այնպիսի երկնաւոր ձայներով—որ չի լին ոչ ոք՝ մարդկեղէն փոշու արարածներից ոչ ոք՝ մինչեւ որ նոցա բիրտ լուղութիւնը չը կաղանայ։

Եթէ ոճը փոխուում է՝ հարկաւ հետք փոխուում է նաև բնաբանների ընտրութիւնը։ Միլտոնը չափի տակ էր դնում և ազնուացնում էր բանաստեղծութեան սահմանն ու լեզուն, նուիրաբործում էր նոցա արտայայտած իմաստներն ու բառերը։ Ամենայն ոք, տառում էր նա վերջին ժամանակ. ով որ ծանօթ է բանաստեղծութեան բուն էութեան հետ։ «Չուտ սկսում է ըմբռնել, թէ որքան անարդ արարածներ են փցուն բանահրւակները, և թէ ընդհակառակ ինչ փառաւոր, կրօնական, գսեմ պաշտօն կարելի է տալ բանաստեղծութեանը այն դէպերում։ երբ որ նա աստուածային և մարդկային աշխարհքը նկարագրում է...» նա այն աստուածապարգե ձիրքն է, որ թէպէտ և հազուագիւտ՝ բայց անշուշտ իւրաբանչիւր ազգի մէջ գէթ մի քանիսների վերայ իջնում է ի վերուստ ամբիոնի հետ՝ նա էլ մի զօրութիւն է, որ ազգի մէջ ցանում և սնուցանում է առաքենութեան և ընկերական ազնութեան սերմերը, որ հանդարտեցնում է հոգւոյ ալէկուծութիւնները և հաստատում է զդայութեանց հաւասարակշռութիւն։ որ պանծալի և պանչելի օրներգութիւններով փառաբանում է Աստուծոյ ամենակարողութեան աթոռն ու պետութիւնը, որ ցնծական երգերով անմահացնում է մարտիրոսների և սրբերի յաղթական մահը, արդարների և բարեպաշտ ազգերի աշխարհաշէն գործերը։ Եւ իրօք մանկութիւնից սկսած՝ նա փորձում էր սաղմոնները դարձնել ոտանաւորի, այլ և շարագրում էր ներբաղներ ի պատիւ Քրիստոսի ծննդեան, թլփատութեան և շարչարանց։ Այնուհետև սկսում է երգել տխուր երգեր մի մանկան մահուան առթով, մի ազնիւ տիկնոջ առթով. ապա շարագրել լուրջ և ազնիւ ոտանաւորներ ժամանակի մասին, ոտանաւորներ հանդիսաւոր երաժշտութեան մասին. քսան և երեք տարեկան հասակի առթով, որ մի յագաղեալ գարունք է՝ տակաւին կոկն կամ ծաղիկ չը պարգևելով։—Բայց նա գնում է հօր մօտ գիւղը, և այնտեղ առաջին անգամ ցայտում են նորա հոգւուց աշխոյժ հասակի, յոյսերի և երազների ցնծութիւնները, ինչպէս որ ամառ ժամանակ զեղում է առաւօտեան բուրմունքը։ Եւ ինչ ահագին անջրպետով է բաժանուած այս զուարթ, պայեծառ, հանդարտ հայիցողութիւնը՝ զեռուցնալ պատանեկութիւնից, Եւրապիրեան Առնեխու հեշտախտութիւնից։ Միլ-

տոնը սրտի ամերութեամբ ճեմում է, խորազննին դիտում է, ամեն բանին ականջ է նուիրում; ահա միայն այս է նորա վայելած քաղցրութիւնները, իսկ սոքա ոչ այլ ինչ են, բայց եթէ մաքուր հոգւոյ բանաստեղծական բերկ-րութիւններ, Լոել՝ բարձրասլաք արտուտիկին, որ իւր երգերով ուշքի է բերում խորհուրդների մէջ ընկղմուած գիշերին, մինչև որ զարթնի երփ-նագեղ արշալյուսը, երկրագործին՝ որ շուելով ակօններ է փորում, կաթ կթողին՝ որ անխառն ուրախութեամբ երգ է երգում. Հնձուրին՝ որ ձորի մէջ փշերի տակ իւր գերանդին է սրում . . նայել մայխիսի խաղերի և զուար-ձութիւնների վերայ գիւղերում. յապոչ կրթել փարթամ թափորներ տեսնելով և « գործասէր ամբոխի բզզանքը լսելով՝ աշտարակներով զար-դարած քաղաքներում . . մանաւանդ նուիրել անձը քաղցրախորժ ուտանա-ւոր մեղեղիներին, այդ աստուածային ներդաշնակութեանը, և հրապուրիչ՝ ծիածանի գյներով փայլող՝ երազներին, որ այն ոտանաւորները ձեր մոքի մէջ կենդանացնում են,—ահա այսքան միայն. Բայց այս էլ շատ համարե-լով և կարծես յանկարծ զգաստանալով, թէ հեռացել մոլորուել է, նա աշ-խատում է գեղթափ գտնի այդ անմեղ քնքոյշ ուրախութիւնների համար պահ մի առաջ շռայլած գովասանքների դէմ, և իրան այցելելու հրաւի-րում է մելամաղճութեան՝ այն մոտանորհ, աստուածասէր, մաքրասիր կու-սանքն, որ փաթաթուած է փարթամ փարթամ ծալուածքներ արձակած ու սքեմով, և որ գալիս է յամարաքայլ, խորհուրդներով զբաղուած, աշքերը իրա հետ զրուցող երկնքին սկեռած, որոնց մէջ ինչպէս մի հայելու մէջ ցոլացնում է իւր հոգւոյ ամբողջութիւնը . . Այս նորակոչ հիւրի ուղեկցու-թեամբ նա թափառում է այնպիսի լուրջ մտածողութիւններով և լուրջ պատկերներով ալէկոծուած, որոնք մարդուն յիշեցնում են իրա կոչում ու պարտականութիւնները, թափառում է մերթ գարաւոր ծառերի բարձրա-րերձ սիւնազարդի մէջ և նոցա լայնարձակ հովանու տակ, ուր որ մշտապէս թագաւորում է լուսութիւնն ու կիսալյուսը, մերթ « թխադոյն ուսումնատենչ վանքներում. ուր որ յաղթամարմին կամարների տակ մեծ մեծ պատուհան-ները և մանրաքանդակ շքեղազարդ վարդաձեքերը անդրադարձնում են աղօտ կրօնական լոյս . . կամ նստած է ուսումնականի խցի ուշիմացնող լուսութեան մէջ, ուր որ ծղրիթը ճռճռում է, ուր որ ժրաջան կանթեղը լոյս է հեղում, ուր որ միտքը՝ անցեալ ժամանակների աղնիւ մոքերի հետ մեկուսացնած կոչում է Պղատանին, որ ծանուցանէ . թէ ինչ աշխարհներ, ինչ սփիւռներ սկսում են իշխել հոգու վերայ, երբ որ սա թողնում է իւր մարմնական բնակարանն ու այն փոքրիկ անկիւնը, ուր որ մենք մեր թշուառ կեանքը մաշում ենք . . նա ամբողջապէս թափանցուած էր այս վսեմ փի-լիսոփայութեամբ, ինչ լեզուով էլ որ գրէր Միլտոնը — անգլիերէն, իտալե-րէն, թէ լատիներէն, — գրականական որ աեսակը որ շօշափէր — նուագ, որհներգութիւն, տնատ, ողբերգութիւն, թէ գիւցալներգութիւն, — նա գարձեալ միշտ իւր մտածողութիւնները այդ փիլիսոփայութեան էր դարձ-նում, նա միշտ փառաբանում է կուսական սէր, բարեպաշտութիւն, վե-

հանձնութիւն, դիւցազնական զօրութիւն։ Եւ այս ծագում էր ոչ թէ վերիշերց մոլեռանդ բժամնդրութիւնից, այլ նորա յատուկ բնութեան խորութիւնից։ Իղձն ու իշխող ընդունակութիւնը առաջնորդում էին նորան դէպի ազնիւ մտածմունքներ։ Նա այնքան ցնծութիւն էր զգում դոցա երկրպագելու ժամանակ, որքան Շէքսպիրը — ստեղծելու, Սորիֆաը — խորտակելու, Քայրոնը — մաքառելու, Սպենսերը — երազելու ժամանակ։ Նոյն իսկ պամուճազարդ քերթուածներում, Քէն - Զօնսոնի Հնարած Դիմակներում, որոնց միակ նպատակն էր շքեղ զգեստներ հանդէս հանելու և կախարդական այլարանութիւններ ներկայացնելու, ասում ենք այդ քերթուածներում էլ Միլտոնը իւր բնութեան կնիքն էր դրոշմում։ Դիմակները սկզբներում լոկ միայն պալատական զրօսանքներ էին։ իսկ նա նոցանից դարձրեց մշնանալուն և անյուղունունեան խրաներ։ Նոցանից մէկը՝ կոմուսը՝ ունի շատ բարդ կնճիռ, կատարեալ ինքնուրժոյնութիւն։ զարմանալի վսիմ ոճ, և գուցե պէտք է համարուի Միլտոնի երկասիրութիւնների մէջ ամենից ընտիրը։ մինչդեռ նա աւելի ոչինչ չի արտադրում, բայց եթէ միայն առաքինութեան համար գովեստ։

Այստեղ հէնց սկզբից երկիրը թողած՝ երկնքի հանդէսն է բացում մեր առաջ։ Հողագնտի խիտ անտառների մէջ իջած ոգին արտասանում է հետեւալ ներբողութիւնը։

Արամազդի ապարանաց աստղական նախամուտքի մօտ — այն է իմ՝ հայրենիքը։ այն տեղ անմահ կերպարանքները՝ անօսր ոգիները՝ լուսազարդ կենում են անդորր և անապական օդոց պայծառ սփիռներում, — անհամեմատ վեր և բարձր՝ քան այն մթարագոյն և կորած տեղեաց գարշութիւնն ու ունացնութիւնը, — որ մարդկանց լեզուով երկիր է կոչւում։ և որ մի աղտոտ ախոռ է, ուր նոքա՝ իրար վերայ կուտակուելով և միայն իրանց անարդ մտածմունքների մէջ թարթափելով — կուռում, մաքառում են իրանց դիւրաբեկ և զրավաստակ կենաց պահպանութեան համար, — մոռանալով այն պսակը, որ Առածինունիւնը փոխարէն վարձատրութիւն է տալիս — իւր հաւատարիմ սպասաւորներին, — սուրբ աթոռների վերայ բազմած աստուածների դասի մէջ։

Այսպիսի ներգործող անձինքներ չեն կարող խօսել, նոքա երգում են։ Այս թատերախաղը՝ նախնեաց տարազով մի գուսաներգութիւն է և բազկացած է օրհներգութիւններից, ինչպէս Պոմենիւնը։ Հանդիսատեսը տեղափոխում է իրական աշխարհից մի այլ աշխարհ։ Նա այս տեղ լսում է ոչ թէ մարդկանց, այլ զգացումներ, ներկայ է նուագահանդիսին, կարծես թէ Շէքսպիրն է լսում, կամ այնպէս շարունակութիւն պէտք է համարուի Շէքսպիրի Ամառայն երեսոյեան երուչ, ինչպէս որ տղայ մարդկերանց հաստայների կորովահունչ խմբերգակը՝ շարունակութիւն է դառնում գործիական նուագարանների վառվուն և տիսոր երգակցութեան (սիմֆոնի)։

Մթագնած անտառի գալարուն շավիղներով, որ տատանուող ստուերը շատ հեշտ կարող է դայթակղեցնել ճանապարհորդի ոտքը, թափառում

մի ազնիւ տիկին . որ իւր երկու եղբայրների հետքը կորուսել է, և որ աւելի զարհուրում է, երբ որ հեռուից իրա աշանջին հասնում են վայրագ ձայներ և աղմբկաւոր խնդութիւններ . Ահուկ կիրկեհ որդի՝ վաւաշու Կոմուսի շուայտութիւնն է այն, որ գաղանների փօխակերպուած մարդկանց աղէտալի ողբի մէջ՝ ուրախ կաբաւում և լուցած ջահերը խալացնում է . Այս այն ժամն է, . երբ որ լճերն ու ծովերը իրանց թեփոտ երամներով լուսնի տակ կաղմում են կոհակածե շրջանապար, մինչդեռ դիւրաշարժ յաւերժահարսներն ու միր թզուկները՝ նյոնպէս սստոստում են մինացած զառիվայրերի վերայ և աւազի երեսին : Արհաւդրը սաստկանում է նորա սրտի մէջ, նա չոքում է ծնկների վերայ և յանկարծ՝ երկնքի աղօտ լուսի տակ՝ թեպոտ ստուերագծերի մէջ՝ իրա աշքերին է ներկայանում սպիտակաձեռն Յոյսը, պայծառակն Հաւատը և Անարատութիւնը, այն խորհրդաւոր և երկնային պահապանները՝ որոնք զգաստ են պահում նորա կեանքն ու պատիւը :

— Ողջոյն քեզ, ով պայծառակն Հաւատը, ով սպիտակաձեռն Յոյս, — Հրեշտակ՝ որ սաւառնում ես գլխիս վերև և գօտեսորուած ես ոսկէ թեերով! — և դու սուրբ Անարատութիւն, ամբիծ պատկեր . ես ձեզ յայտնի տեսնում եմ և հաւատում եմ: — թէ նա՝ ծայրագյոն բարութիւնը՝ որ չոր արարածներին համբերում է — միայն այն նպատակով, որ նոքա հնազանդ գործիքներ գառնան նորա վրեժինդրութեան համար, — անշուշտ կառարէ՝ եթէ հարկաւոր լինի՝ լուսազուարթ հրեշտակին — իմ կեանքը և պատիւը պահպաններու ամենայն բռնութիւններից, Քայլ միթէ սխալուեցայ, կամ գուցէ այն սև ամպն, — որ գէպի գիշերը շրջեց իւր արծաթանշուլ ծայրերը...

Ցիկնը կոչում է եղբայրներին, « նորա արծամէ ձայնի քննչոյշ և հրաշլի հնչիւնները բարձրանում են որպէս մաքուր և երկնային անուշահոտութեանց բարբունքներ և ծաւալուում են օդի մէջ . . . , մինչեւ որ հասնում է անառակ չաստուծու ականջը և զարթեցնում է նորա մէջ ցնծալի սէր: Նա վաղելով գալիս է, քրմի շորերով:

Միթէ հնարաւո՞ր է որ երկրաւոր փոշուց բաղկացած մահկանացուն — աստուածային կախարդանք ազդէ իւր հնչիւններով! — Ոչ, անտարակոյս պյու կրծքի մէջ աստուծոյ զօրութիւն է կենում: — Ոչ, ինչ քաղցրութեամբ են տարածուում նոքա — լուսեան թևերով! ամայի գարձած գիշերուայ կամարի տակ . . . — ես շատ անգամ ականջ եմ դրել, երբ որ Կիրկէ մայրս, երեք համբարուների և ծաղկալարդար նայուհիների սպասաւորութեամբ, — այն ինչ կախարդիչ խոտեր և մահաշունց թոյներ են հաւաքել, — իրանց երգերով կարողացել են գերել մի անմեղ հօգի և հրապուրել նորան երջանիկ ելիսիոնը. այդ միջոցին Սցիլլէն արտասուր է թափել, — ալեաց մոռնչը առ ժամանյն գագարել է, համայն բնութիւնը լողութիւն է գարձել. — մինչեւ իսկ անգութ Քարիբրէն շշուկավ արտայայտել է իւր հաւանաւթիւնը . . . — Սակայն երեք չեի զգացել — պյապէս սուրբ և խոր ցնծաւթիւն, — պյապէս չնաշխարհիկ քաղցրութիւն: —

Դոքա ուրեմն երկնային երգեր էին. Միլտոնը դոցա նկարագրումէ և մի և նյն ժամանակ դոցա է նմանում, նա լիւլին ապացուցանում է դորհով իւր վարպետ Պղատոնի խօսքը, թէ առաքինութեան մեղեդիները՝ առաքինութիւնն են ազդում:

Կիրկէի որդին պատրամերով տանում է ալնիւ տիկնոջը և նստեցնում է ծոխ ապարանքի մէջ, փափկաճաշակ սեղանի առաջ, բայց ի զոր. տիկինը մեղադրում է նորան, ընդդիմանում է, վիրաւորիչ խօսքեր է թափում, և այդ ժամանակ բանաստեղծի ոտանաւորը դիւցազնու սրտմտութիւն է շնչում՝ գժոխային փորձիչի անարդ առաջարկութիւնների դէմ:

Երբ որ անառակութիւնը — անսուրբ հայեացքներով, անպարկեցած շաղումներով և լկտի լեզուով, — մանաւանդ պժդայի և բազմամեղ գործքերով — պղծութեամբ է վարակում մարդուն մինչևի հոգու խորութիւնները, — այն ժամանակ նորա շօշափութիւնից հոգին մեռնում՝ լուծում է — իրան թաղում է մարմնի մէջ և անասնական կերպարանք է ստանում, մինչև որ բոլորովին կորցնէ — իւր նախկին էութեան աստուածային բնութիւնը: — Այսպէս էլ մահացունչ ծանր և խոնաւ գոլորշին — որ մննք շատ անգամ տեսնում ենք սպանդանոցների և շիրիմների կամարի տակ, — դանդաղում է, չի հեռանում, նստած է մնում թարմ գերեզմանի կշտին, — կարծես թէ վախենում է կորցնել իւր փայփայած նեխուած դիակը:

Աերջ ի վերջոյ ազնիւ տիկինը փրկուում է որոդայթներից, եղբայրներն ու քյրը խաղաղ թագաւորում են հայրական պալատում: Իսկ նոցա պահպան Ոգին արտասանում է Հետեւեալ ներբողականը, ուր բանաստեղծութիւնը փիլիսոփայութեան ձև է առնում, ուր արեւելեան առասպեցի փափկասիրական նշցյլը՝ իմասանոց ելիսիոնի մէջ ևս թափանցում է իւր ճառագայթներով, ուր հաւաքած են բնութեան բոլոր ճոխութիւնները, որպէս զիաւելի զօրայնեն առաքինութեան հրապարը:

Ես այժմ թռչում եմ գեպի ովկիանը — այն երջանիկ գաւառները: ուր որ ցերեկը բնաւ չի փակում իւր աչքերը, — և պէտք է անցնեմ բարձրութիւնները, երկնից մեծածաւալ դաշտերը: — Այստեղ ես շնչում եմ ջինջ ոդ — Աեսպերի և նորա երեք դստերց (Երեկորնէից) արգաւանդ գրախտի մէջ, ուր նոքա ոսկէպտուղ ծառի շուրջ երգեր են երգում: — Այս տեղ, երերուղ ստուերի և անտառների մէջ — կայտուում է զարդագեղ, աշխոյժ գարունքը: — վարդագէմ շնորհքներն ու ժամանակները — մերում են այն տեղ իւրեանց բոլոր դանձերը: — այն տեղ է կենում և անմահ ամառը: — ուր արեւմտեան հողմերը իրանց հոտաւէտ թեերով — տարածում են նարդոսի և ինկի անոյշ բուրմունքները — մայրեաց ծառուղիների երկարութեամբ: — Այն տեղ հիրիկը իւր հիւթալից արմատով — ուռոգում է ինկաւէտ եղիները, — ուր որ աձում են ծաղիկներ՝ այնպիսի զարմանալի երփներով, — որ նյն իսկ հիրիկի նկարագեղ գոտու մէջ չեն գտնուի, այն տեղ նա զօլացնում է եղեմական ցողով — յակնթի և վարդի մահիճը, ուր շատ անգամ՝ հանգիստ է առնում Ագանիս պատանին — խոր վերքից բժշկուած, — և ուր վայելում

է քաղցր քուն, մինչեւ որ գետնի վերայ — նորա ոտքի տակ տխուր նստած է Ասորեստանի դիցուհին, նոցա գլխին՝ հեռու հեռու բարձրութեան վերայ՝ պայծառ լուսի մէջ — սաւառնում՝ է դիցուհու բազմահուակ զաւակը, աստուածային սէրը — գրկախառնած իւր սիրուհի Փոփէին՝ որ անոյշ մոռացութեան մէջ է ընկղմած:

— Դուք մահկանացուք, որ կուզէիք հետևել և փառակից լինել ինձ, — սիրեցէք առաքինութիւնը. նա միայն ազատ է — նա միայն կարող է ձեզ սովորեցնել այն ճանապարհը, — որով թեակոխել կարող էք սփիռների դաշնակութեան ամենաբարձր ծայրին. — Խոկ եթէ ձեր յօժարամիտ առաքինութիւնը անզօր գանուի, — նոյն իսկ երկինքը կընոնարհուի՝ նորան օգնութիւն մատուցանելու համար. —

Միթէ հարկաւո՞ր է մի առ մի նշանակիել սորա թերութիւնները, տարօրինակ ճոռոմ արտայայտութիւնները՝ վերածնութեան ժառանգութիւնը և փիլիսոփայական վիճաբանութիւնը՝ աղեղնաբանութեան և պլատոնականութեան պառողները: Բայց ընթերցողը հազիւ թէ նկատում է այդ պակասութիւնները. Այդ ամենը հեշտ քողարկում է զուարթերես վերածնութեան պատկերի տակ, որ մի նոր կերպարանք է ստացել խոտակրօն փիլիսոփայութեան ազդեցութեամբ և ծաղկինների սեղանի վերայ որբութեամբ բազմեցուցած՝ վսեմական զգացման շնորհիւ:

Այս էր Միլտոնի վերջին հեթանոսական քերթուածը, նա վաղուց թողել էր բանաստեղծութիւնն և աւելի արձակ շարադրութիւններ էր գրում Եկաւ ծերութիւնը, և բանաստեղծ՝ զուրկ իշխանութիւնից, գործունէութիւնից, գուցէ և յոյսերից՝ կրկին նուիրուեցաւ իւր պատանեկութեան երազներին. Ինչպէս երբեմն վաղ հասակում՝ այժմ ևս վսեմականը նա վնասում է արտաքրյա այս աշխարհի, վասն զի ըոլոր իրականութիւնը՝ մանր չնշին է, հանապազօրեայ կեանքը՝ միսիթարական չէ: Նա իւր նոր ներգործող անձինքներին ընտրում է սրբազան հնութեան ծայրագոյն հեռաւոր սահմանում, ինչպէս առաջուայ ներդործող անձինքներին ընտրել էր առապելական հնութեան ծայրագոյն սահմանում, որովհետեւ մեծ տարածութիւնները նոցա տափսի են հասակ, իսկ սովորութիւնը դադարում է նոցա սրբազնին՝ եթէ հնար չէ ունենում՝ ամենայն բան հասարակ չափով չափել: Հատ ժամանակ չըկայ, որ բեմի վերայ հանդիսանում էին երևակայական էակներ — Աւախութիւն՝ Զեփիւոփ և Արևագալի դուստրը, Մելամաղձութիւն՝ Խստայի և Սատուրնոսի դուստրը, Կիրկէի զաւակ Կոմու՝ բաշեղով պսակուածը, զօղանջող անտառի և աղմկալից շուայտութեան աստուածը: Իսկ այժմ մեր առաջ գերբնական արձանների պէս բարձրանում են Սամսոն՝ հակաների հաւասարը, ամենազօր Աստուծոյ ընտրեալը, կուպաշտների ջարդողը, սատանան իւր հպատակ դևերով, Քրիստոս հրեշտակներով: — և այն մեծ անջրպետը, որ մեզ դոցանից բաժանում է այլ ևս ի-

մաստակելու տեղիք չըտալով՝ ապահովութեամբ պահպանում է նոյն՝ մեծութիւնը և մեր՝ հիացումը։ Յետոյ մենք գնում ենք աւելի վեր և աւելի քարձր, ուր որ կատարում մէ իրերի նախածագումը, ուր որ կան յաւիտենական դշութիւններն, ուր որ սկսում է միտք և կեանքը, տեսնում ենք Աստուծոյ պատերազմների հանգեւը, գնում ենք այն անծանօթ աշխարհքը՝ ուր որ ըզդացումն ու գոյութիւնը՝ վեր լինելով քան մարդու հասողութիւնը՝ դըժուարաւ ենթարկում է նորա դատողութեան և քննութեան, հետևապէս նորա մէջ զարմեցնում են կամ ջերմեռանդ բարեպաշտութիւն կամ երկիւղածութիւն։

Բայց եթէ Միլտոնի սիրտը նոյնը մնաց, նորա հանձարը փակուեցաւ, Պատանեկութեան տեղը բռնեց հասունութիւնը, Ճոխութիւնը պահասեցաւ, Մըջութիւնը աւելացաւ, Ցասնուեօթը տարու մաքառումներն ու ձախորդութիւններն այդ հոգու մէջ արմատացրին կրօնական գաղափարներ, Դիցարա, Նութիւնը տեղի տուեց աստուած արանութեան, լուրջ վիճաբանութեանց սովորութիւնը վերջապէս թուլացրուց քնարերգական եռանդը, աճած ուսումնական հմտութիւններն՝ աւելորդ բնուներով ծանրացրին բնական երևակայութիւնը, Բանաստեղծը այլ ևս չի երգում բարձրաթուի ոտանաւորներով, այլ կարգաբան ոճով պատմում կամ խորհրդածութիւններ է անում, այս ամենը ձեւացնելով լուրջ ոտանաւորների մէջ, Այլ ևս ինքնուրոյն ստեղծողութիւններ չի արտադրում, այլ նմանում է ողբերգութիւններին և նախնեաց դիւցալներգութեան։ Սամանը՝ ցուրտ և վսեմ ողբերգութիւն է, Վերաբերէ Շրաբորէ՝ ցուրտ և ազնիւ դիւցալներգութիւն է, վերջապէս նա ստեղծում է հորուսոր Շրաբորէ վիպասանութիւնը, որ լի է պակասութիւններով, բայց և վսեմագոյն գեղեցկութիւններով։

Աւելի լաւ կլինէր, եթէ նոյնը գրէր՝ ինչպէս և սկզբում մտադիր էր՝ բանագործութեան (դրամայի) ձեռվ, կամ՝ մանաւանդ քնարերգական գուսաներգութեան ձեռվ, ինչպէս որ Եսքիլէսի Պրոմեւլա է։ Կան մի քանի որոշ բնաբաններ, որոնք որոշ ոճով պէտք է գրուին. ապա թէ ոչ գուք ինքներդ քանդում էք ձեր ստեղծածը, և երանի ձեզ, եթէ գիպուածքը գէթ մի քանի հատուածներ երկնել տայ և պահպանէ այն խանգարած ամբողջութեան մէջ, Որպէս զի գերբնականը հանդիսացուի, հարկաւոր է սովորական և հասարակ աշխարհահայեցողութիւնը իսպառ թողնել, ապա թէ ոչ ինքներդ ակամայ կը մատնէք ձեր թերահաւատութիւնը նոյն գերբնականի նկատմամբ։ Այս վերջինը յայսնուում է մարդարէական պայծառատեսութեամբ, ուստի և պէտք է արտայայտուի պայծառատեսութեան յատուկ ոճով։ Երբ որ Սպիտսէրը շարադրում է՝ նա ընկղմում է իւր մարի ուրուացնորների մէջ, Մենք լսում ենք նորա օդային երաժշտութեան ներդաշնակ նուագահանդէսը և յմբը շլացած ու հրապուրած աչքերի առաջ գուլուցու պէս դիզուում են նորա անրջական տեսիլների բայլերը։ Երբ որ Դանարը շարադրում է, այն ժամանակ նորա բնական վիճակն է զառանցութիւնը, ուստի և նորա անձկութեանց աղաղակները, նորա ցնծութիւնների, գժո-

Խային կամ խորհրդաւոր ուրուականների անյալիր շարքերը՝ մեղ էլ նորա  
հետ ի միաօհն տեղափոխում են այն աներեւաթ աշխարհքը, որ նա նկա-  
րագրում է: Միայն յափշատակութիւնը երևելի և ստոյդ է կացուցանում  
յափշատակութեան երևոյթները, թթէ դուք մեղ պյանպէս էք պատմում Աս-  
տուծոյ մեծագործութիւնները, իբր թէ պատմում լինիր Կրօմուէլի արարք-  
ները՝ այսինքն խորիմաստ և աչալուրջ հմառութեան նղանակով, մենք այն  
ժամանակ ամենեին չենք նկատում Աստուծուն: իսկ որովհետեւ նա կազ-  
մում է ձեր երկասիրութեան գլխաւոր նիւթը, մենք ուրեմն ամբողջ երկա-  
սիրութիւնը չենք նկատում: Ընթերցումը աւարտելուց յետոյ մենք այս  
եղրակացութեան կուգանքը. մենք կասենք, թէ հեղինակը իբրև հիմք իւր  
շարադրութեան համար վեր է առել յայտնի աւանդութիւն և նոյնը շքե-  
ղագործել է չափած ու խորհած ինքնագիւտ մտածութիւններով, ապա ու-  
րիմն նա մի քարոզիչ է, և ոչ թէ մարդարէ, մի զարդարիչ է և ոչ թէ բա-  
նաստեղծ, Ի վերջոյ մենք համոզւում ենք, որ նա պյանպէս է երդում Աս-  
տուծոյ մասին, ինչպէս որ հասարակ ժողովուրդը աղօթում է Աստծուն,  
այսինքն ոչ թէ սրաի բուռն բղխմամբ, այլ սերտած արարողութիւններով:  
Աշխատեցէք, որ ձեր սրաի մէջ գտնէք հին սաղմոսերգուների և առա-  
քեալների բորբոքման կայժերը, որ ձեր երեւակայութեան մէջ նկարուի աս-  
տուծային վիպատանութիւնը, որ մաքի խորութեամբ զգաք այն վերագոյն  
ազգումը՝ որովհ հրաշագործուած և սոսկացած ոգին աեսնում է կենդանի  
Աստուծուն: Այս պայմանների տակ ինքնին կոկոէ լիաձայն բարրառել  
քնարերգական տաղը, որ լի կըլինի գեղեցկութիւններով և կենդանու-  
թեամբ, իսկ մենք այդպիսի ձայներով ազդուած՝ էլ տեղիք չենք ունենայ  
հարցնել, արդեօք խօսովը հողածին Ադամն է, թէ իջեալ Մեսիայն. չենք  
պահանջի, որ նկար մեր իրականութիւնը ունենան և հոգեբանական օրէնք-  
ներին համաձայն լինին: Խստութեամբ չենք դատի ոչ նոցա չնչին հոգսերը  
և ոչ նոցա ատարօրինակ արարքները: Ընդհակառակն, այն միջոցին մենք կը  
մոռանանք հասարակաց չափը՝ որով սովոր ենք դատել եղելութիւններն ու  
ատենախօսութիւնները: մենք ինքներս հաղորդակից կըլառնանք այդ ստեղ-  
ծողական քաղցր ցնորքներին, բռնի կըլափշտակունք համարձակագիւտ  
ոլոտակերների և հսկյածէ փոխարերութիւնների հեղեղի մէջ, մենք այն-  
պէս հրաշական ցնցում կը ստանանք, ինչպէս Խպէլէսը — երբ որ նորա  
Պրոմեթեասը՝ Արամազդի շանթերով Կովկասի անդունդների մէջ դլորուելով՝  
իսկոյն լսում է իրա վիճակը ողբացող գետերի, ծովերի, անտառների և  
չնչաւոր արարածների աշխարհախումբ նուռագահանդէսը, կամ մենք կը դու-  
զանք Դաւիթ մարդարէի պէս, քանի որ նորա առաջ կենդանանում էր Ե-  
հովան: « յաչս որոյ հազար ամք որպէս երեկի զի անց որպէս պահ մի գի-  
շերս: ընդ առաւօս որպէս գալարի ծալկեսցին, ընդ երեկոյս չորացին: :  
Աստուծատեսութիւնը մի առանձին չնորհք է և ոչ ամենքը այդ շնորհքը  
ունին, . զի հոգին զամնայն քննէ՝ և զիսորս Աստուծոյ» :

Բայց բնաղանցականով կամ գերբնականութեամբ ոգևորուելու դարը՝ որ

վաղուց արդեն թառամել էր՝ Միլտոնի ժամանակ տակաւին չէր նորոգուել. Դանաը մթնանում էր հեռաւոր անցեալի ամպերում, Գեօթէի դալուստը վերապահուած էր ապագայի համար. Թէպէտ այն ժամանակ դեռ ևս չէին դասում Թառաստի ամենասառաւածութեան ճաշակով, տակաւին հասկացողութիւն չունէին բնութեան այն մութը զօրութեան մասին՝ որ իւր խոր ծոցերում ամփոփում է անցաւոր և փոփոխական դպյութիւնը. բայց մի և նոյն ժամանակ իւրցել էին նաև բնազանցական դրախտի և անմահ Սիրոյ գաղափարը, որ մի գերակայ լոյս էր փրկութիւն անչացող հոգւոյ համար. Բողքականութիւնը ոչ թէ աղաւտղեց՝ այլ նա զօրութիւն չունեցաւ. Հին վսեմութեամբ վերանորոգել աստուածային բնութիւնը. արդարեւ նա պահպանեց հաւատոյ հանդանակը և հին աւանդութիւնը. բայց յուշ ածեց միայն բարեպաշտութեան հրահանգութիւնը և շնորհաց դաւանութիւնը. Նա քրիստոնէին քարոզում էր անձնական փրկութիւն և աշխարհական աղատութիւն (փափից). չը կարողացաւ շեշտել հորդու փրկութիւն և հանձնոր աղատութիւն. Եթէ պատշաճաւոր է ասելու, նա աւելի մարդուն փոփոխեց, քան Աստուծոյ գաղափարը կենդանացրեց. Ուստի նորան վիճակուեցաւ լոյս ածել մարդապատում դիւցազներգութիւն, և ոչ թէ հոգեշոնչ բանաստեղծութիւն. Նորան վիճակուեցաւ երգել ոչ թէ Աստուծոյ ամենազօր գործքերը. այլ հոգւոյ փորձութիւնը և փրկութիւնը. Քրիստոսի ժամանակ մարդկութիւնը ծարաւում էր աշխարհածնութեան (կասմոդոնական) վիպասանութիւնը արձանագրել, Միլտոնի ժամանակ՝ հոգերանական իսոստովանութիւններ արտապայտել. Քրիստոսի ժամանակ ով որ մի փոքր երեակայութիւն ունէր, ճիգն էր թափում հոչակել գերբնական էակների նուիրապետութիւնը և տիեզերքի պատմութիւնը, Միլտոնի ժամանակ՝ ում որ սիրտը բաբախում էր, ճիգն էր թափում ուրիշներին հաղորդել հոգեկան պէսպէս ազգումները և շնորհակրութեան պատմութիւնը. Արդ մինչդեռ Միլտոնի իւր հմտութիւնները և մոտախորհութիւնը նորան գրաւում և դրդում էին բնազանցական վիպասանութիւն գրելու, գերբնականութիւնը բանաստեղծելու որ այն գարու ոգու համար բոլորովին անհամապատասխան ձեռնարկութիւն էր.—մի արուեստաւոր Բունիէնի ոգեւորութիւնը և կրթութեան բովքի մէջ չընկղմուած միաբը՝ առատ նիւթ գտաւ հոգերանական աշխարհում, որ և իսկ և իսկ յարմար եկաւ իրա ժամանակի քիմքին, այնպէս որ այս գէպքում մեծ մարդու հանձարը աւելի թոյլ գանուեցաւ. քան մի սոսկական պղնձագործի պարզամտութիւնը.

Դանն այն է, որ Միլտոնի քերթուածը, քնարերգական երեակայութեան պատրանքներին տեղի չըտալով և դոցանից զգուշանալով՝ լայն դուռ է բաց անում մանրակրիտ քննադատութեան համար. Մենք անմասն գոլով յափշտակութիւնից՝ սառը սրտով կշռի մէջ ենք դնում գործող անձններին. նոցանից պահանջում ենք կենսական զօրութիւն, իրական իսկականութիւն, անթերի ամբողջութիւն, իրանց հիմնական բնաւորութեան հետ

մինչեւ վերջ համաձայնութիւն, այնպէս որ ամենայն վիրասանութիւնից կամ բանագործութիւնից կը պահանջէինք: Հենց որ այլ ևս տաղերգութիւններ չենք լուսւմ՝ մենք ցանկանում ենք, որ տեսնենք դեմք իրեր և հոգիններ. մենք կամենում ենք, որ Եւան և Ադամի գործեն և զգան իրանց նախնական բնութեան համեմատ, իսկ Աստուած, Մեսիա և Սատանան՝ իրանց գերբնական եռութեան համեմատ: Այսպիսի ինդիր լուծելու համար հազիւթե նոյն իսկ Ըեբսպիրը բաւական լինէր, իսկ արամարան և մանրաբան Միլտոնը միանգամայն չի համապատասխանում՝ իւր պաշտօնին: Նորա երկի մէջ դուք կարդում եք միայն կանոնաւոր, հանդիսաւոր ատենաբանութիւններ և աւելի ոչինչ. Նորա ներգործող անձինքը՝ մարմին առած մենախօսութիւններ են, իսկ նոցա զգացումներն՝ ու հակացողութիւնները՝ տղայութիւններ և հակասութիւններ:

Արդ ահա Ադամ և Եւա՝ մարդկան սեսի առաջն զոյգը, Հետաքրքրուած մօտենում ենք դոցա կատարեալ յուսով, թէ անշուշտ կը դտնենք Ռափայյէլեան Ագամին և Եւային, որոնց որ Միլտոնը ուզեցել է նմաննել. ինչպէս որ հաւատացնում են նորա կենսագիրները, այսինքն կը գտնենք վայելչակազմ: չքնաղ, կաթն և արին բղխող և աշխոյժ կը բերից շարժուող մանուկներին, որնք մերկ են արեգական պայծառ ճառագայթների ներբոյ, աղջած կանգնած են կուսական բնութեան փառահեղ պատկերի առաջ, շրշահայում են աւելի և աւելի փայլոն, շլացած և մոլորուած հայեացքով, բայց որոնք պայտ հայնացքով ոչ աւելի իմաստ են ըմբռնում դրսի իրականութիւնից քան իրանց շուրջ խոտի վերայ պառկած կենդանիների մի զյոդ, զոր օր. մի գոմէշ և նորա մատակը: Խսկ երբ որ մատղրութեամբ ականջ ենք դնում՝ մենք այն եղրակացութեան ենք հաւնում: թէ մեր աչքի առաջ անտարակյս մի անդիմական ընտանիք է, Միլտոնեան դարուերկու իմաստակներ: զոր օր. ճիշդ ինչպէս որ են մի գնդապետ հետշինսոն և նորա տիկինը: Երկնային Արարէ՛, մի յապաղի՛ հագուստով ծածկել այս մերկութիւնը: Այսքան խոհամիտ և բարեկիրթ մարդիկ՝ անշուշտ կը հնարէին իրանց համար նախ և առաջ վարակի և ամօթխածութիւն: Հապա ի՞նչ խստկցութիւններ՝ ինչ հրաշալի խօսակցութիւններ ենք լսում: Գրտնական ճառահասութիւններ՝ քաղաքավարի ձևերով աւարտաբանած, փոխագործ քարոզութիւններ՝ խոնարհ ակնածութիւններով կնքած: Այս ակնածութիւններն էլ մէկ մէկ փիլիսոփայական փաղաքուշ մէծարանքներ են և բազմախրատ ժպիտներ: «Ես թախանձանքը լսեցի, ասում է Եւան, և այն օրից զգում եմ», թէ որքան աւելի բարձր է առնական շնորհքն ու զգոնութիւնը, քան սիրուն գեմքը, և թէ այն է միայն ճշմարիտ գեղեցկութիւնը: \*): Սիրելի, դիտնական բանաստեղծ, որքան գոհ կը լինէիր, եթէ երեք ամուսիններից գեմք մէկը՝ որպէս բարեխրատ աշակերտուհիդ՝ յանկարծ

\*) Յայնմ օրէ գիտեմ քանի յաղթ է գեղց շնորհ առնացի եւ զգոն իմաստութիւն՝ որ սաշյա միայնն է գեղեցիկ:

իւր խօսքը վայելչապէս կնքէր այդ մեծակշիռ տեսական կանոնը արտայայ-  
տող բառերով։ Բայց ով դիտէ, գուցէ հենց այդպէս էլ սերտած խօսում՝  
էին. ահա քո ընտանեկան կեանքից քաղած մի տեսարան։ Այսպէս ա-  
սաց նախածնող մայրը և ամուսնական չքնաղութիւն մեծապէս արտայայ-  
տող հայեացք արձակելով քաղցրագորովովթեամբ խոնարհեց նախահօր  
կուրծքի վերայ՝ նորան կիսագրկելով։ իսկ սա հիացած նորա գեղեցկու-  
թիւնից և անձնատուր շնորհքներից՝ ժամում է սրտի խողքից ծնած սիրով  
և սուրբ համբաշյր է գրոշմում նորա կուսական շրթունքների վերայ (\*)։  
Միլտոնի Սդամը նախ քան եղեմական գրախտը մտնելու. կացել է Անդ-  
իվայում, այն տեղ սովորել է անգլիական respectability և չը մոռացաւ հե-  
տզ առնելու բարոյական խրատների լաւ պաշար։ Լսեցէք այս մարդուն, որ  
գիտութեան ծառի պատուղը գեռ չէ ճաշակել։ Ո՞ր ուսումնաւարտը կարող է  
իւր առաջին պաշտօնական ատենախօսութեան ժամանակ՝ արտասանել այսքան  
իմաստակարծ առածներ և աւելի ինքնահաւան ու ճոռոմափայլ եղանակով։  
« Աբանչելագեղ ընկեր, գիշերաժամի հասնիլը և բոլոր արարածների փու-  
թալը դէպի հանգիստ՝ մեղ յիշեցնում են, որ մենք էլ սկսենք ննջելու  
հոգսը քաշել։ որովհետեւ, նախ՝ Աստուած մարդու համար սահմանել է՝ որ  
ու գիշերուայ փոփոխութեանց համեմատ՝ աշխատելու և հանգստանալու  
կանոնաւոր շրջանը, երկրորդ՝ քնի ժամադիր ցողը արդէն ծանրացնում է  
մեր արտեանունը անցյշ և քաղցր թմրութեամբ։ Միւս արարածները ամ-  
բողջ օր ծոյլ և անգործ են, ուստի շատ էլ կարօտ չեն հանգստեան։ Ի վե-  
րուստ վիճակուել է, որ մարդու մարմինն ու հոգին աշխատանք ունենան  
ամենայն օր, որ թէ նորա գերազանցութեան նշան է, և թէ իւր ամենայն  
դործոց մէջ երկնային նախախնամութեան գրաւական, մինչդեռ անսառն-  
ները երկրի երեսին շրջում են անպատակ, ուստի և Աստուած չի պահան-  
ջում նոցանից իրանց գործքերի համարը (\*\*)։ Անտարակդյու, այս հիանալի

\*) Զայս խօսեցեալ ամենեցուն մօրս և աչօք խանդակաթեալ  
Ի գութ ամուսնասէր ընդունական սուրո հարսանեաց,  
Անձկարեկ զանձն հեղեալ ըզնախահարբն ի կէս փարի...  
Նըթեալ հանդիպէր հուժէկու կրծից առնն իւրոյ.

Որ հրաշացեալ ընդ գեղ նորին և ընդ անձնատուր վայելչութիւնս՝  
Ժմունցաւ վաեմական սիրով...

Եւ համբորեաց սուրբ ողջունիւ զնախամօրն կուսին շրթունս,

\*\*) ..... Գեղ! ցիկդ իմ ամուսին,

Գիշերաժամն և ամենայն ինչ ի հանգիստ իւր փութացեալ,

Զմեղ ի նոյն հրաւիրեն առ յԱստունոյ փոխանակաւ

Կարգեալ վաստակ և հանգիստ մարդոյ սոտ տունջեան և գիշերոյ,

Շաղ քնոյ ի դէպ անկեալ անոյշ և թանձը թմրութեամբ

Հակէ զարտեանունս։ Այլ արարածք զօրըն ցերեկ

Սահեալ գատարկ և անդործ, չեն հանգստեան ինչ կարօտ.

պուրիտանական խրատը՝ հոգեշահ խրատ է։ Դա հայելու պէս ցոյց է տալիս անդիսական բոլոր առաքինութիւնն ու բարոյականութիւնը՝ որը ոչ ապաքեն վայել է ամենայն ընտանիքներում երեկոյեան պահուն կարդալ մանուկների առաջ աստուածաշունչի պէս։ Այս տեղ Ադամը կատարելապէս հանդիսանում է որպէս ընտանեաց գլուխ, քուէի իրաւունք ունեցող քաղաքացի, անդամ՝ երեսիփոնանական սենեկի, որսֆորդեան նախկին ուսանող, կնոջ մերժ ընդ սերթ խորհրդատու, որուն արուելիք ուսումնական ծանօթութեանց հարկաւոր բաժինները՝ նա զգոյշ ձեռքերով է կշռում։ Զոր օր այս գիշեր խեղճ կինը լաւ երազ չի տեսել. իսկ գիտնական դոկտոր Ադամը նորան մատուցանում է հետևեալ դժուարամարս մի հոգեբանական խառնագեղ։ «Պէտք է գիտենաս, որ հոգու մէջ շատ կան ստորին կարողութիւններ, որոնք բանականութեան ծառայում են իրր իրանց ծայրադոյն իշխանի։ Նոցա մէջ գլխաւորն է Երեսակայութիւնը. դա ստեղծում է՝ մեր զգայարանքներին մատչելի եղած բոլոր արտաքին առարկաներից՝ օդեղէն ձեւեր և առեղծուածներ, որ և բանականութիւնը միացնելով իրար հետ կամ բաժանելով՝ նոցանից կազմում է այն ամենը՝ ինչ որ մենք առ հասարակ հաւանում կամ ժխտում ենք. Երբ որ բանականութիւնը բացակայ է լինում, Երեսակայութիւնը շատ անդամ արթուն է մնում և ճգնում է կերպարանքով նորան նմանիլ. սակայն այդ ձեւերը խառնիխուուն կցկցելով, յաճախ առաջացնում է՝ մանաւանդ երազում՝ անկապ անհետեղական կերպարանքներ, որովհետև այլանդակ կերպով շփոթում է ներկայ և անցեալ անյարիր բառերը ու գործողութիւնները . \* )։ Ամենայն ինչ ինչ այս տեղ ձեւած ու յար-

Մարդոյս մարմնոյ կամ հոգւոյ սակեալ է գործ օր ըստ օրէ,  
նշան պատույն, և յամենայն ի գնացս իւր երկնի ինսամոյն։  
Իսկ անասունք վայրապար շրջին անդործ վարատական,  
եւ Աստուած ոչ ունի զվարկպարազի գործացն համար։

- \* ) ..... Ծանիր, զի են յոգւոջս զօրութիւնը բազում ստորինք  
Որ ի հարկի կան բանի հառայութեան իրր իշխանի,  
Ի նոսա ցնորք մտացս ըզգլխաւորն հարկանէ սպաս.  
Յամենայն ի դրուստ իրաց զոր ազդեն հինգ արթուն զգայունք,  
Առեղծուածս ստեղծանէ և կերպարանս ինչ օդեղէնս,  
Զոր բանին յօգեալ ի մի կամ բաժանեալ՝ կազմէ նօքք  
Զամինայն զոր հաւանեալ յանձին ունիմք և կամ ժխտեմք,  
Զոր և իսկ անուաննեմք մտաց կարծիս կամ գիտութիւն։  
Մինչ բնութիւն ի քուն կայցէ, բանն ի ներքին մեկնի սենեակն,  
Ի խուսել նորա՝ ցնորքն որ սիրէ յայն կերպարանիլ.  
Քաղում անդամ արթուն հսկէ՝ զնորայն առնուլ նմանութիւն։  
Բայց յաճախ, զկերպարանսն խառնիխուուն կցկցեալ,  
Մանաւանդ յերազի՝ յառաջ բերէ ինչ այլանդակ,  
Անդէպս հիւսեալ բան և գործ անցեալ վաղուց կամ դեռաղեռ։

մարեցուցած է որ խեղճ Եւսյի քունը դարձեալ բերեն։ Երեւի հէնց այս ազդեցութիւնն էլ ունեցան նոյն խօսքերը, քանի որ նորս ամուսինը՝ այժմ հանգստացնել ուզենալով՝ աւելացնում է, ճիշդ որպէս մի երդուեալ կողմավարիչ (Կազուկիստ)։ «Մի արտմիր, շարը կարող է անգիտութեամբ գալ և անյայտանալ Աստուծոյ և մարդու հոգու մէջ, չը թողնելով ոչ բիծ և ոչ խղճահարութիւն» \*։

(Ճարտարագիր)։ (Թարգ. ) Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ

## ԱԶԳԱՑԻՆ

Աղգային ընդհանուր ժողովոյ յունիս 5ի նստին մէջ առենական գործողութիւններէ յետոյ կարդացուեցաւ եկեղեցական Համագումար ժողովոյ տեղեկագիրն որ կը հաղորդէր նորոգ Կրօնական ժողովոյ համար պատրաստեալ ընտրելեաց եռապատիկ ցանկն։

Առենապետ Բժ. Յ. Թիրեաքեան էֆէնտիի հրաւիրանօք սոյն ցանկին վրայ գաղտնի քուէարկութիւն կատարուեցաւ 44 երեսփոխանաց մասնակցութեամբ և Կրօնական ժողովն կազմուեցաւ հետեւեալ կերպիւ։

Քուէ

1.	Գեր. Խորէն Արք - Եպիսկոպոս Նար - Պէյ	.	33
2.	» Սիմէօն Եպիսկ. Սէֆէրեան	.	30
3.	» Գարեգին Եպիսկ. Սրուանձտեանց	.	29
4.	Արժ. Յովաէփ վարդապետ Այվազեան	.	37
5.	» Յովշաննէս վարդապ. Արշարունի	.	30
6.	» Յակոբ վարդապ. Ա. Փափազեան	.	26
7.	» Վահան վարդապ. Յակոբեան	.	32
8.	Տաճատ վարդապ. Ոսկանեան	.	27
9.	» Սահակ Ա. քահանայ Տ. Սարգսեան	.	31
10.	» Յովհաննէս Աւագ քահանայ Մկրեան.	.	30
11.	Դրիգոր Ա. քահանայ Աճէմեան	.	28

\* ) Բայց մի արտմիր, շարն երթայ և գայ յէին միտս և մարդոյն Առանց նոցին հաճութեան, և չարկանէ բիծ կամ ըստդիւտ։